



Կրթական հարցեր 2. Ձեր երեխայի ուսումնառման ու զարգացումը հասկանալը

Քանի որ գիտելիքն ու ուսումը մարդկանց կյանքում կապված են շրջապատի և հարաբերությունների հետ, յուրաքանչյուր մարդ յուրովի է սովորում: Յուրաքանչյուրին ձևավորում է մշակույթն, անհատական փորձառությունը և եզակի անհատական հատկությունները: Ընտանեկան համոզմունքների, վերաբերմունքի և նպատակների բազմազանության պատճառով ուսումնառության նոր հնարավորություններ առաջացնելու մեկ եղանակ չկա՝ անկախ նրանից՝ խոսքը մեծահասակների կամ երեխաների մասին է:

Ի՞նչ գործոններ կարող են օգնել ՌԻՍՄԱՍ ԴՐԱԿԱՍ ՄԻՋԱՎԱՅՐ ՍՏԵՂԵԼ:

Երեխաները, ովքեր իրենց ընտանիքի անդամներին համարում են մանկավարժներ, հպարտություն են զգում և ավելի շատ դրդապատճառ ունեն սովորելու համար: Կրթության վերաբերյալ ակնկալիքներն ու վերաբերմունքը երեխաների դպրոցական հաջողությունների վրա ամենակարևոր ազդեցություններից են: Երբ երեխաները զգում են, որ ընտանիքում իրենցից մեծ ակնկալիքներ ունեն, նրանք ավելի շատ ժամանակ և ջանք են ներդնում ակադեմիական գործունեության մեջ: Ընդհանուր առմամբ, սովորելը կարող է նաև խորապես ազդել Ձեր անձի հանդեպ ունեցած զգացմունքների, Ձեր կարողությունների և Ձեր հետագա նպատակների վրա:

Ի՞նչ գործոններ են օգնել Ձեր երեխաներին ՌԻՍՄԱՍ ՀԱՆԴԵՊ ՍԵՐ ՍԵՐՄԱՍՆԵԼ:

ընտանիքները, որ հենվում են սեփական ուսումնական փորձառության վրա, հաճախ իրենց երեխաներին ուսուցանելու արդյունավետ եղանակներ են մշակում: Դուք կարող եք զարգացնել սովորելու նկատմամբ Ձեր երեխաների հետաքրքրությունն՝ օգնելով նրանց.

- Նրանց ուշադրությունն ուղղել այն խնդրի վրա, որի վրա աշխատում են
- Բացատրել նոր տեղեկությունները
- Նոր գաղափարները կապել ծանոթ փորձառության հետ
- Պատասխանել իրենց հարցերին

Ո՞ր է ֆորձագետը:

Ձեր երեխայի մանկավարժները սովորում են Ձեր երեխայի յուրահատուկ համակրանքները և հակակրանքները, խառնվածքը և հաղորդակցման ոճերը, երբ դուք կիսում եք նրանց հետ ձեր իմացած տեղեկությունները: Քանի որ

Դուք Ձեր երեխային ամենալավն էք ճանաչում, կարող եք Ձեր մանկավարժին պատմել Ձեր երեխայի պատմությունը և իսկապես օգնել նրանց հաղորդակցվել միմյանց հետ: Ձեր երեխայի մանկավարժի հետ համագործակցության մեջ մտնելու պատրաստակամությունը նույնպես կարևոր է Ձեր երկուսի միջև ամուր գործընկերություն հաստատելու համար և կօգնի Ձեզ իրատեսական նպատակներ դնել Ձեր երեխայի ուսման համար:

ԻՆՉՊԵՏ ԿԱՐՈՂ ԵՔ ՉԱՐԳԱՑՆԵԼ ԱՅՍ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ:

- Ընդունեք մանկավարժների հետ համագործակցության մի մոտեցում՝ կիսելու ուսուցման նպատակներն ու գաղափարները երեխաների ուսմանն աջակցելու համար ինչպես տանն, այնպես էլ Zoom հանդիպումների ժամանակ:
- Երբ հարմար գտնեք, պատկերացրեք, որ մանկավարժը Ձեր գործընկերն է, և անկեղծորեն կիսվեք Ձեր ընտանիքի, այդ թվում՝ Ձեր երեխայի նպատակների, ընտանեկան մշակույթի և Ձեր հետագա ծրագրերի մասին: Մտածեք, թե ինչպես կարող եք Ձեր ընտանիքի փորձառությունները ներառել Ձեր խոսակցություններում:

ԲՈՎԱՍԴԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՄՏԱԾԵԼԸ

Նախ, եկեք շարունակենք դիտարկել **խաղի վրա հիմնված ուսուցումը**՝ որպես երեխաներին դպրոցական պատրաստվածությանն աջակցելու միջոց: Ինչպես տեղեկացանք «Կրթական հարցեր. Խաղի գիտություն» բաժնից, հենց խաղի միջոցով են փոքր երեխաները սովորում աշխարհի մասին: Երբ երեխաները խաղում են, նրանք սովորում են, թե ինչպես են աշխատում իրեն, ինչպես են մտածում, զգում և գործում մարդիկ, ինչպես լուծել խնդիրներ, ունենալ քննադատական և ստորադասարժան մտածողություն, կիսվել իրենց մտքերով և գաղափարներով, լավ աշխատել ուրիշների հետ և կառավարել իրենց հույզերը: Երբ խաղում եք Ձեր երեխայի հետ, դա օգնում է նրան սովորել և արդյունավետ միջոց է հանդիսանում ուսուցման բովանդակությունը, օրինակ՝ գրագիտության և մաթեմատիկայի հմտությունները, ներկայացնելու համար:

Խորհուրդներ գրագիտության հմտություններ մշակելու վերաբերյալ

- Ձեր երեխայի հետ նայեք և կարդացեք գրքեր
- Կարդացեք գրքեր, որոնք Ձեր մայրենի լեզվով են
- Պատմությունն ընթերցելիս ուսումնասիրեք գրքի նկարները՝ նայելով և նկարագրելով դրանք
- Պատմությունն ընթերցելու ընթացքում Ձեր երեխային հարցեր տվեք՝ տեսնելու, թե ինչպես է նա հետևում
- Պատմության մասերի ներկայացում կազմակերպեք Ձեր երեխայի հետ
- Երբ Ձեր երեխան ընտրում է սիրված պատմությունը, կարող եք կարդալ այն մեկից ավելի անգամ

Խնամողներին մաթեմատիկայի մոտեցմանն օգնելու խորհուրդներ

- Ամենօրյա գրույցների ընթացքում փնտրեք մաթեմատիկայի հետ կապված հարցեր տալու եղանակներ.
» Հարցրեք. Որքան: Քանի: Կարող ես հաշվել: Ինչ ձև ունի սա:
- Ձեր երեխային ներառեք այնպիսի գործերի մեջ, ինչպիսիք են ճաշ պատրաստելը, սեղան դնելը և լվացք ծալելը: Խոսեք գործնական կիրառությունների մասին. Քանի՞ հոգու համար ենք սեղան դնում: Կարող ես համադրել գուլպաները: Ինչ է գույգը:
- Միասին բաներ կառուցեք և խոսեք չափումների մասին: Որքան բարձր է այդ աշտարակը: Արի քանոն օգտագործենք:

Դուք շատ կարևոր դեր ունեք Ձեր երեխայի կրթության մեջ: Մտածեք այն մասին, թե ինչպես կարող եք ամրապնդել Ձեր երեխայի սերը սովորելու հանդեպ, երբ նրանք տեղափոխվում են մանկապարտեզ: Այն հմտությունները, որոնք Դուք ներդնում եք այժմ Ձեր երեխայի մանկավարժների հետ ամուր համագործակցություն զարգացնելու գործում, կծառայեն նաև, երբ երեխան շարունակի իր ուսումը դպրոցում: Անկախ նրանից՝ մենք դասարանում ենք, թե վիրտուալ կապի մեջ, միևնույն է, մենք պետք է կապի մեջ մնանք: Հիշեք. Մենք միասին ավելի ուժեղ ենք:

Աղբյուրներ
ECLKC. Ընտանեկան ներգրավվածության արդյունքները հասկանալը. Գիտությունից մինչև փորձառություն շարք. Ընտանիքները՝ որպես սովորողներ Բոուչինգի հարցեր. Խաղալու գիտությունը
NAEYC. Ինչպես մաթեմատիկա ներմուծել Ձեր երեխայի օրվա մեջ